



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

370.1

U-68



204



ՆՈՐԱՀԱՍ ՕՐԻՈՐԳԻՆԵՐԻՆ
ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԻՐԴ

„Միայն բարի ցանկութիւններով չի կարելի ամբացնել բնատրութիւնը. ինչպէս գարբինը կռահում է երկաթը մուրճով սալին ծեծելով, այնպէս էլ պէտք է աշխատել բնատրութեան վրայ:“

(ՓՐԱՌՈՒԳ)

Թարգմանեց
Ն. Բ. Նիկողոսեան

4/225

Ա. Լ. Գ. Ս. Ա. Ն. Դ. Բ. Պ. Գ. Ը.
Տպարան Յակովբ Ղասապեանցի
1905
(24)

ADM.

2-15482

370-1

15-05

ՀՈՆ ՄԻԼԼԵՐ

15 8 JAN 2015

2-15482



ՆՈՐԱՀԱՍ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԿԻՐԳ

„Միայն բարի ցանկութիւններով չի կարելի ամբողջել բնաւորութիւնը. ինչպէս դարբինը կռանում է երկաթը մուրձով օալին ծածկով, այնպէս էլ պէտք է աշխատել բնաւորութեան վրայ“

(ՓՐԱՌԻԳ)

Թարգմանեց

Ն. Բ. Նիկողոսեան

ՄԱՌ. № 17513

Ա. Լ. Բ. Ս. Ա. Ն. Գ. Բ. Պ. Ը.

Տպարան Յակովբ Ղասաբեանցի

1905

12 8 JUN 2013

45.259

Дозволено цензурою, 28 Дек. 1904 г., г. Тифлисъ.



39876-63

ՆՈՐԱՀԱՍ ՕՐԻՈՐԳՆԵՐԻՆ
 ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

„Ո՛ր կը հասկանայ իր սխալները, ծածուկ սխալներից սրբեր ինձ, Տէր,, Սաղ. 18 և 13.
 „Թագաւորի աղջկայ բոլոր փառքը ներսն է, նրա շորերը ոսկով են վարդարուած., Սաղ. 44 և 14.

Ներկայ գրույցիս մէջ զիմուժ եմ նորահաս օրիորդներին այն դիտաւորութեամբ, որ լիշեցնեմ նրանց ս. Գրքի խօսքերը, որոնք անպայման իրանց են վերաբերում: Այդ խօսքերը չարմար են մեր կեանքի բոլոր գէպերին, մեր գոյութեան իւրաքանչիւր շարժման միջոցին, թէ աշխատանքից լետոյ հանգստանալիս, թէ ծառայական պարտաւորութիւններ կատարելիս, թէ սովորական տնային գործեր հոգալիս և թէ երկրիս վրայ շրջելիս: Մեզանից իւրաքանչիւրի համար շատ օգտակար է բարեկամի աչքով կողմնակի դիտել մեզ վրայ: Այս անխուսափելի ճշմարտութիւնն ինձ գրգեց զիմել իմ ծանօթ մի քանի բարեմիտ երիտասարդներին և խնդրել, որ նրանք պատասխանեն իմ հարցերին, որոնք

և կազմեցին ներկայ գրուցիս հիմքը Ահա այն հարցերը, որ առաջարկել էի նրանց:

1, Ի՞նչ պիտի թերութիւններ, ձեր կարծիքով, աւելի շատ են նկատուում ժամանակիս նորահաս օրիորդների մէջ:

2, Ի՞նչ խելքի ու բնաւորութեան տէր պիտի լինի գաղափարական նորահաս օրիորդը:

Այսպիսով մենք մեր զրոյցն սկսում ենք նորահաս օրիորդներին աչքի ընկնող թերութիւններից և այնուհետև կ'անցնենք խօսել կնոջ գաղափարական կոչման մասին:

Վերև բերածս նշանաբանը մի խնդրուածք է, որով աղօթում ենք մեր թերութիւններն ուղղելու, իսկ երկրորդը պատկերացնում է նորահաս օրիորդի ցանկալի կոչումը, Սաղմոսերգուի խօսքով:

Ո՛վ կըհասկանայ իւր սխալները, ծածուկ սխալներիցս սրբիւր ինձ, Տէ՛ր: Մեզանից ո՞րը չէ կրկնել սրտի խորքից այս աղօթքը: Ճշմարիտ կարեկցութեան արժանի են այն մարդիկ, որոնք չեն ձգտում թերութիւններից ազատուելու, թէկուզ շատ թանգ նստի ուղղուելը: Իրանց վրայ:

Ժամանակիս փիլիսոփայ և անուանի բարոյախօս-գրող Ջոն-Րէսկինսն ասում է.

—Եթէ գտնէք որևէ թերութիւն ձեր բնաւորութեան մէջ, այնպէս հաշուեցէք, թէ մի մեծ նորութիւն էք գտել. այդ բանը նրանով է մեծ, որ թերութիւնն այլևս չի ծածկուելու ձեր աչքից. բայց եթէ դեռ չէք գտել ձեր բոլոր թերութիւնները, այն ժամանակ դիմեցէք Աստուծուն, «ր Նա ձեզ օգնէ ցոյց տալով ձեր թերութիւնները, թէկուզ դրանով վերաւորուի ձեր հպարտ ինքնասիրութիւնը»:

Ուղիղ որ արժանի են այս խօսքերը մետաղի վրայ: փորագրուելու:

Նոյն մատենագիրը նորահաս օրիորդներին դիմելով՝ ասում է.

—Համոզուեցէք, որ որքան և մեծ կարծիք ունենաք ձեր մասին, այնու ամենայնիւ թերութիւններ կ'ունենաք, որքան էլ չտեսնելու տաք այդ թերութիւնները, դարձեալ ուշագիւր նայելով՝ վերջ 'ի վերջոյ կ'զգաք նրանց գոյութիւն ունենալը: Բայց թերութիւնները, ինչքան էլ չնչին լինին, մերկացնելով, խելացի կրլինիք աշխատելով նրանց արմատախիլ անելու:

Առհասարակ բարոյական կատարելութեան ձգտելը ձեզ համար կանոն դարձրէ՛ք, առանց ժամանակ կորցնելու, իսկ այդ նպատակին հասնելու համար, պէտք է ամենից

առաջ ձեզ ճանաչէք, եթէ դուք վախենում էք ձեր անձը բարոյապէս գնահատելուց, ապա աշխատեցէ՛ք որոշ ու բոլորովին անկողմնապահ կերպով հաշիւ տալ ձեզ, թէ ինչո՞ւ իսկապէս վախենում էք դրանից: Այնքան քաջութիւն ունեցէ՛ք, որ նայէք ձեր թերութեան վրայ բաց աչքով ալնպէս, ինչպէս որ տեսնում էք ձեր մարմնական թերութիւնները:

Աշխատեցէ՛ք ունենալ երկու հայելի, մէկը հոգու, իսկ միւսը դէմքի համար և ամեն օր խնամքով հոգացէ՛ք ինչպէս մարմնի գեղեցկութեան, այնպէս էլ նրանից աւելի ձեր մտքի ու սրտի բարոյական գեղեցկութեան մասին, լիշեւով որ մարմնական թերութիւնները սերտ կապուած են ձեր բարոյական տրամադրութեան հետ:

Ընդհանրապէս Բէսկինը խորհուրդ է տալիս շատ չբարեկամ թերութիւնների վրայ, այլ աւելի հոգալ նրանց ջնջելու մասին, որի առիթով նա նկատում է. «Անձնական թերութիւնները ջնջելու ամենալաւ միջոցն է աշխատել նրանց խեղդել նոր սերմանած բարութիւններով, իսկ թերութիւնների վրայ արամելը անօգուտ է: Մանաւանդ զգուշացէ՛ք ուրիշների թերութեան մասին մտածելուց, սրունեցէ՛ք իւրաքանչիւր մարդու մէջ արժա-

նիքներ, իսկ այդ արժանիքների համար պէտք է նրանց յարգել ու նմանուիլ: Նկատեցէ՛ք, եթէ ինքներդ չունիք աչքի բնկնող սրէէ արժանիք, բայց կան աշխարհիս մէջ այնպիսի մարդիկ, որոնք կամ իրանց եւանդուն բնաւորութեան շնորհիւ, կամ պատահմունքով, կեանքի յաջող հանգամանքների օգնութեամբ կարողացել են հասնել ցանկալի բարձրութեան, ուստի գնահատեցէ՛ք ուրիշների ազնիւ յատկութիւնները և փոխանակ ձեր թերութիւնների վրայ տխրելու, նրանցով ուրախացէ՛ք, որովհետեւ ինքնիրան նուստացնելը կը հասցնէ բանը ինքնասիրութեան սահմանին, որը կոչւում է հիւանդ ետականութիւն:

Մարդիկ առհասարակ անձնական վերաւորանքի տեղ են ընդունում իւրաքանչիւր փորձ, երբ նրանց թերութիւններն է ցոյց տրւում, սրանով նրանք գառնում են անհեռատես: Մեր թերութիւնը ցոյց տալով, առիթ է լինում մեզ ազատուել նրանից: Ամեն օր պէտք է աղօթենք Աստուծուն, որ նա բանայ մեր աչքը, մեր ուշադրութիւնից թաքնուած թերութիւնը տեսնելու համար, և ոչժ տայ մեզ կռուելու նրա հետ:

Իմ ուղղած հարցերի պատասխանների մեծ մասի մէջ նկատուում է ժամանակիս հասարակութեան անկասկած բարեցակամ վերա-

բերմունքը դէպի նորահաս օրիորդները: Հասարակութեան զգացումներն այլ կերպ էլ չէին կարող լինել, քանի որ հոգու ազնիւ յատկութիւններ ունեցող մարդկանց համար ծանր է թերութիւններ տեսնել նրանց մէջ, որոնց յարգում են: Մարդկանց համար շատ աւելի հեշտ է ընտիր յատկութիւններ գրտնելը, քան թէ թերութիւններ տեսնելը նորահաս օրիորդների մէջ:

Իմ թղթակիցները նորահաս օրիորդների տեսակ-աեսակ թերութիւնների շարքում, ցոյց են տալիս նաև նրանց մէջ մեծ տեղ բռնող զարդարանքի սէր ունենալը: «Օրիորդներն այնքան ժամանակ են կորցնում զարդարուելու վրայ, որ ազատ ժամանակ չունին ուրիշ լուրջ առարկաների վրայ մտածելու, նրանց հետաքրքրում է միայն իրանց զարդը: Զարդարուելու սէրը նրանց մէջ զարթեցնում է ցանկութիւն իրանց բարեկամուհիներին ամաչեցնելու. այդ սիրուց շատ անգամ կորցնում են նրանք իրանց բարի անունը, որը ապագայում կորստեան պատճառ է դառնում:

Ժամանակիս օրիորդները չափազանց զարդարանքի սէր ունենալուց, ամբողջ օրը քաշ են գալիս խանութները և սրտի թրթիռով զարդարանք են փնտռում: Այդ թափառումների պատճառով կորցնում են իրանց թանկագին

ժամանակը, այն ինչ տանը նստելով՝ կարող էին օգտակէտ գործերով պարապել, որով կրթութեացնէին իրանց ծնողների կամ ընտանիքի որևէ անդամի ծանր բեռը:

Սակայն դէպի զարդարանքն ունեցած օրիորդների սէրը միշտ չպէտք է թեթևամտութեան նշան համարել, ոյդ երևույթը գուցէ կապ ունի ճաշակի նրբութեան հետ, որը սիրում է պերճութիւն, ինչ որ առհասարակ տեղի ունի բնութեան մէջ. ինքը բնութիւնը իւր բազմատեսակ արտադրութիւններով, ձգտում է զարդարուել գոյնգոյն ծաղիկներով: Այսպէս երբեմն նրանց չի կարելի մեղադրել անմեղ զարդարանքի համար:

Բայց մեղադրելի են այն օրիորդները, որոնք զարդարուելու վրայ ահագին ժամանակ են կորցնում, միևնոյն ժամանակ սպառելով եռանդ ու փող, արհամարում են տնային պարտաւորութիւնները, լուեցնում են խղճի ձայնը և ստորացնում իրանց պատուի զգացումը:

Որպէս զի իւրաքանչիւր օրիորդ հեշտ հասկանայ արդեօք շատ չէ՞ զբաւուած զարդարանքով, իսկ կասկածը փարատելու համար, թնձ ուշադրութիւն դարձնէ իւր վրայ, թէ արդեօք հին շոր հագնելիս չի տրտմիլ և այս բանը աւելի վատ չի՞ ազդիլ իւր

վրայ քան թէ վատ բնաւորութիւնը և կամ անտանելի լինելը: Ո՛րն աւելի մտատանջութիւն է պատճառում, արգեօք նոր հագուստի վրան՝ լաւ չյարմարուիլը, թէ մտաւոր կրթութեան պակասութիւնը կամ տնային պարտաւորութիւնների զանցառութիւնը:

Ի դէպ է այստեղ մէջ բերել Րէսկինի նամակից մի հատուած, որով նա պատասխանել է մի օրիորդի հարցին, թէ՞ ինչ կանոններով պէտք է ինքը առաջնորդուի:

Նա ասում է.

1. Օրիորդը պէտք է կարողանայ հաճոյանալ մարդկանց.

2. Նա պէտք է ունենայ համեղ և պարզ կերակուրներ պատրաստելու հմտութիւն.

3. Նա պէտք է գիտենայ զգեստներ կարել.

4. Նա պէտք է սովորեցնէ մարդկանց կարգ ու կանոն, և

5. Պէտք է դաստիարակէ մարդկանց.

1. Մարդկանց հաճոյանալը. Աշխատեցէք հաճելի լինել ձեզ հետ ապրողներին, այնպէս որ ձեզ հետ ապրելը հեշտ ու թեթեւ լինի և ո՛չ թէ մարդիկ ձեզանից զգուած՝ հեռանալ ցանկանան: Կարողացէք վայելել մարդկանց յարգանքը, ձեր մէջ էլ զարգաց-

րէք ուրիշներին յարգելու ընդունակութիւնը:

2. Գիտէք արդեօք կերակուր պատրաստել թէկուզ ամենապարզ, բայց համեղ, պահելով տնարարութեան կանոնները, իսկ եթէ չգիտէ՞ք, օգտուեցէք առաջին յարմար գէպքից և սովորեցէք այդ գիտութիւնը, բայց երբ կը սովորէ՞ք, օգնեցէք ուրիշներին էլ ձեր գիտութիւնով ու խորհուրդներով: Մասնաւոր տնարարութիւն սովորեցրէ՞ք աղքատ կանանց, որով դուք իսկուպէս ծառայութիւն կ'անէք մարդկանց, երբ նրանք կը սովորեն անտեսութեամբ աւելի շատ օգտուել կենսական մթերքներից:

3. Մարդկանց զգեստներ կարելը: Զեր ժամանակից բաժին հանեցէ՞ք խեղճերին ամուր շորեր կարելու համար, որոնց վրայ ազատութիւն տուէք ձեր ճաշակին գոյներ ու ձևեր ընտրելու մէջ, բայց աւելի աշխատեցէ՞ք ձեր ձեռագործի նիւթերը լինին մտչելի, էժան չքաւոր մարդկանց համար: Այդ գիտաւորութեամբ տեղեկութիւններ ժողովեցէ՞ք չքաւորների մասին, որի մէջ է կանոնում խնդրի ամենազգոժուար մասը:

4. Մարդկանց կարգ ու կանոն սովորեցնելը, այսինքն հոգալ, որ նրանք մաքուր և կոկ լինին, և ճշտութիւն պահեն ամեն գործում: Իւրաքանչիւր նորահաս օրիորդ պէտք

է վաղ վեր կենայ. պէտք է գործի կանգնել
ամառը 6 ժամին, իսկ ձմեռը՝ 7-ին: Ամեն
օր պէտք է տունը կարգի բերել, մաքրել, իւր
վրայ առնել տնային գործերի մի մասը, իսկ
կատարած գործը խնամքով կատարել, որով
օրինակ կըտրուի միւս ծառայողներին: Եթէ
տան առաջ կայ պարտէզ, ազատ ժամերը
նրան նուիրեցէ՛ք, անպէտք խոտերը պոկեցէ՛ք,
չոր տերեւները կտրատեցէ՛ք, իսկ ձմեռը ձիւնն
աւելեցէ՛ք, մաքրեցէ՛ք: Բաց օգուժ կատարած
աշխատանքը շատ կընպաստէ առողջութեանը,
ամրացնելով ոյժերը:

5. Մարդկանց կրթելը: Նորահաս օրի-
որդներն ամենից առաջ պէտք է մտածեն
իրանց կրթութեան մասին, իսկ յետոյ գիտու-
թիւն աստիճան շրջապատողների մէջ: Նրանք
պէտք է սովորեն հասկանալով կարգալ և
ինչ որ ուշադրութեան արժանի է, միտքը
պահեն: Սրանից դուրս է գալիս այն՝ որ
պէտք է կարգալ միայն այն գրքերը, որոնք
կարեօր են և օգտակար: Աւելի լաւ է ու-
նենալ սեպհական գրքեր, քան թէ ուրիշնե-
րից վերցնել կտրգալու: Սեպհական գրքեր չու-
նենալը մտաւոր աղքատութեան նշան է: Գրք-
քեր զնելն ունի և այն լաւ կողմը, որ նրանց
վրայ կըծախսեն իրանց խնայած փողերը, այդ
դէպքում օրիորդները կըլինին աւելի զգոյշ

իրանց ընտրութեան մէջ և կըզնեն միայն
ընտիր շարադրութիւններ, սրոնք պէտք
կըզան իրանց:

Գժբախտաբար նորահաս օրիորդներն ա-
ւելի մտածում են արտաքին զարդարանքների
մասին, կարեօրութիւն չըտալով խելքի ու
սրտի զարդերին: Այդ աւելիով ասում է Պետ-
րոս առաքեալը. — «Թող ձեր զարդը լինի հո-
գու և սրտի զարդը՝ այն է հեղութիւն, խո-
նարհութիւն, մաքրութիւն, այլ ոչ թէ մա-
զերի խոպոպների մէջ փալտող ոսկին կամ
զգեստների շքեղութիւնը»:

Նորահաս օրիորդների համար մեծ պա-
կասութիւն է, որ զուրկ են բնաւօրութեան
տոկունութիւնից և թեթեամիտ են: Կեանքի
լաւը նպատակ չունենալուց նեղուած՝
նրանք զանցառութեան են տալիս մինչև ան-
գամ ամենանուիրական պարտականութիւն-
ները, կարծես նրանց մէջ բոլորովին զարգա-
ցած չէ պարտքի զգացումը, թէև շատ են
խօսում ազատութեան և անկախութեան
մասին: Յարմար է այստեղ առաջ բերել
Րէսկինի շատ բնորոշ կարծիքը ազատութեան
և անկախութեան մասին, որոնց մասին շատ
անգամ խօսում են մեր ժամանակում: Դի-
մելով նորահաս օրիորդներին՝ նա ասում է. —
«Ամենից աւելի աշխատեցէ՛ք տիրել ազատու-

թեանը, այսինքն, ազատ կերպով մարդկանց օգնելու թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս, իսկ անկախութեան մասին լաւ է բոլորովին չգառանձել, որովհետև մենք բոլորս էլ սեղ-ղակի կախումն ունենք ոչ միայն այնպիսի մարդկանց կամքից, որոնք շատ անգամ մեզ համար անձանօթ են, այդպէս էլ կախումն ունենք շատ վաղուց անցած դարերից, որովհետև մարդկութեան ապագայ բախտը անմիջապէս կախուած է այն փոքրիկ ոյժի մասնիկից, որ թագնուած է մեր մէջ:

«Իրանց ամենալաւ տարիքը, — գրում է իմ թղթակիցներից մէկը, — նորահաս օրիորդները կորցնում են թեթևամիտ շատախօսութեան կամ դատարկ վէպերի ընթերցանութեան վրայ, որոնց համար շատ անգամ արտասուք են թափում, ցաւելով վէպերի հեղինակների հնարած հերոսների կամ հերոսուհիների վրայ, երբ գուցէ իրանց աչքի տուած մարդիկ են տանջւում, կարօտ լինելով միխթարական խօսքի կամ օգնութեան»... «Նորահաս օրիորդներն այնպէս են կուլ գնացել կեանքի շնչին բաներով, որ նրանց ժամանակ չէ մնացել լուրջ մտածելու և պատրաստուելու կեանքի պատասխանատու պարտականութիւններին: Մի խօսքով, իմ թղթակիցներից շատերի կարծիքով, «թեթևամտութիւնը, վայր

ի վերոյ դատողութիւնը և սրանց հետեանք — դատարկախօսութիւնը նորահաս օրիորդների մէջ նկատուող պակասութիւններ են, այդ պատճառով նրանց անհրաժեշտ է հոգալ մտածելու ընդունակ դառնալ և վերաբերուելու կեանքի և պարտաւորութիւնների պահանջները լրջութեամբ կատարելու, այս բանում նրանց կօգնէ կրթութիւնը և բարոյական կարգապահութիւնը: «Նորահաս օրիորդները տանջւում են կամքի բացակայութիւնից գոյութեան կուռում, չափազանց շատ նրանք ենթարկւում են փորձանքի և փչացնում են իրանց հէնց այն դէպքերում, երբ նրանք աւելի պէտք է ցոյց տային տոկունութիւն և հաստատամտութիւն. նրանք քիչ են ըմբռնում, որ իրանց ձեռքն է տղամարդուն իշխելու իրաւունքը, որով կարող են ուզած դէպքում 'ի չարը գործ գնել, կամ որով կարող են իրանց շրջապատող երիտասարդների օգտին ծառայել:

Շատ ցաւալի է, որ նորահաս օրիորդներին հազիւ են տալիս ոհնացիչ գործնական գաստիարակութիւն: Շատ անգամ նրանց մէջ ներշնչում են այն միտքը, թէ տղամարդը ոչ միայն պէտք է պահպանէ նրանց, այլև պիտի մտածէ ու զգայ նրանց փոխարէն: Բայց օրիորդներին նույնքան անհրաժեշտ է բնա-

ւորութեան տօկունութիւն ունենալ գոյութեան կռուի մէջ, որքան անհրաժեշտ է տղամարդու համար, որովհետեւ յաճախ նրանք եղբայրներ չունենալուց՝ ստիպուած են ենթարկուելու կեանքի զանազան ճախորդ պայմաններին: Հէնց յաջող պայմաններումն էլ կնոջը հարկաւոր է բնաւսրութեան տօկունութիւն ունենալ, գոնէ տնտեսական գործերում: Աերջին ժամանակներում, միքանի օրիորդներ, որպէս արհեստ, խոհարարութիւն սովորեցին, որ պատրաստուած լինին տնտեսուհու պատասխանատու զերի համար: Ահա թէ ինչպէս է բնագծում Ռէսկինը տանտիկնոջ գաղափարը:

Տանտիկնութիւն գիտենալու էութիւնը նրանումն է, որ տանտիկինը պիտի իմանայ կանաչեղէնի, մրգեղէնի և համեմունքների յատկութիւնը, գաղափար ունենալ դաշտերում և անտառներում բուսած խոտերի մասին, այդպէս էլ իմանայ բոլոր մթերքների լաւ յատկութիւնները: Կաւ տնտեսուհի լինել, նշանակում է գիտենալ խելացի տնտեսութիւն, նորութիւն մտցնել մեր պառաւտատերի ունեցած տեղեկութիւնների մէջ, այսինքն օգտուել ժամանակակից քիմիայի ձեռք բերած տեղեկութիւններից: Կաւ տնտ

եսուհին տնային գործերի մէջ փորձեր անելով՝ պէտք է հոգայ, որ ոչինչ զուր տեղը չըկորչի:

Կեանքը խաղ չէ. կեանքը բաղկացած է անհրաժեշտ և նուիրական պարտաւորութիւններից: Յորգորում եմ բոլոր նորահաս օրիորդներին և խնդրում, որ սովորեն լուրջ վերաբերուել դէպի կեանքը, ինչ որ հիմնուած է բարոյական հասկացողութիւնների վրայ. խնդրում եմ նրանց հաստատ որոշումով իրանց կեանքը նուիրեն բարոյական բարձր նպատակների. իսկ այդ ձգտմանը, որպէս պատուանդան, ինչպէս վերևում ասուեց, կարող է օգնութեան հասնել իրանց գիտութիւնը, ինքնակրթութիւնը: Ամեն մի օրիորդ թող զբաղուի ինքնակրթութեամբ նոյն իսկ եթէ պէտք չի զոհել նրա վրայ ազատ ըուպէները:

Կեանքը շատ կարճ է. մենք միջոց չունենք հառնելու մեր բոլոր դիտաւորութիւններին, պէտք է հրաժարուել մի որևէ բանից, աւելի լաւ է ջահել հասակում զրկուել բաւականութիւններից ու զուարճութիւններից, քան թէ հասակն առնել առանց նախապատրաստութեան և անկարող լինել խելացի մտածելու:

Այս խնդիրը հեշտ լուծելու համար, խորհուրդ եմ տալիս նորահաս օրիորդներին իրանց գաղափարները տարբերակելու և բարոյա-

39876-67



կան կնոջ կատարելութեանը հասնելու և բոլոր ոյժով աշխատել մօտենալու այդ տիպին: Թող նրանք չիշեն և այն, որ անգործ կեանքը վնաս է առողջութեան, իսկ այդ բանում համոզուելու համար, թող համեմատեն բացօդում գործունեայ կեանք վարող կանանց, դատարկ կեանք վարողներին հետ, որոնք միշտ տխուր են, դժգոյն և անտարբեր են դէպ իրանց շրջապատը:

Իւրաքանչիւր նորահաս օրիորդ պէտք է կարողանայ հաց ճարել իւր համար, պէտք է գիտենայ իւր մտաւոր և նիւթական ոյժերը դրամագլուխ դարձնել: Եթէ նա չբաւոր է, պէտք է հաց ճարէ իւր գիտութիւնով, իսկ եթէ ունեւոր է, նրա գիտութիւնը նման կըլինի մեռած գրամագլխի, որը պէտք է շահեցնել բախտի ձախող պատահմունքին հանդիպելիս. էլ չեմ ասում թէ սրբան ազատ ու բախտաւոր կ'ըզայ կինը գիտութիւն ունենալով, քան եթէ լինէր առանց գիտութեան:

Մի քանի երիտասարդներ պատասխանելով առաջարկածս հարցերին՝ լիջում են նորահաս օրիորդների բամբաստելու սովորութիւնը, որ մի կողմից նրանք պախարակում են իրանց բացակայ ծանօթների և բարեկամների վարմունքը, միւս կողմից, խօսքը չը վերջացրած՝ մոռանալով իրանց խիստ յար-

ձակմունքը, գրկաբաց դիմաւորում են նրանց: Այդպիսիներին կարելի է խորհուրդ տալ, որ նրանք չպարապեն կեանքի առօրեայ հարցերով. խոյս տան այն մարդկանցից, որոնք սիրում են բամբասել. խօսելով շրջապատող իրականութեան մասին, աւելի լաւ է աշխատեն սանձել իրանց լեզուները չարախօսելուց: Ի՞նչպէս կարելի է գնահատել այնպիսիների բարեկամութիւնը, որոնք միշտ պափրաստ են ծաղրել իրանց մօտ բարեկամին, հէնց որ նրանք հեռանալու լինի իրանց տան շէմքից: Աւելի լաւ է համր լինել, քան թէ խօսելու ընդունակութիւն ունենալ և պարապել ողորմելի, դատարկ զրախօսութիւններով ու կծու հեղուկութիւններով, որ այդքան տարածուած է հասարակութեան մէջ:

Եթէ նորահաս օրիորդը խօսելու նիւթ չունի, աւելի լաւ է լռէ, քան թէ խօսի ուրիշների վրայ և անտեղի վայրախօսութիւն անէ: Պանանց հարցի առաջ չըզնալու պատճառներից գլխաւորն այն է, որ նրանք իրար չեն բռնում: Տղամարդիկ պինդ կանգնած են իրանց իրաւունքների ու շահերի համար, իսկ կանայք, ընդհակառակը, իրանց ձգտումների համար համերաշխ չեն: Թէ ինչո՞ւ է այդպէս, դժուար է հասկանալ, գուցէ նրանց գլխաւոր պակասութիւնը հետեւանք

է նրանց դաստիարակութեան պակասութեան կամ աւելի փակուած կեանքի պայմաններին, ինչ էլ որ լինի, նրանց իրար հաւատ չընծայելու թերութիւնն աչքի է ընկնում:

Մտտ անգամ կանանց գործերի մէջ երևում է նախանձ, այն էլ այնպիսի շրջաններում, որտեղ գուցէ բոլորովին չըպէտք է տեղի ունենար: Մեզանից իւրաքանչիւրը գիտէ, օրինակ, որ կանայք շատ անգամ յանձն են առնում գրական թեթև աշխատութիւններ, լոկ այն պատճառով, որ ծախսելու փող ունենան գրպանում, զարգի, զուարճութեան համար, այն ինչ դրանով իսկպէս խլում են մի կտոր հացը խեղճ կանանց ձեռքից: Տղամարդկանց մէջ այսպիսի դէպքեր քիչ են պատահում:

Նորահաս օրիորդների մէջ շատ անգամ տեսնւում է ուրիշներին վայել լարգանք տալու բացակայութիւն, մանաւանդ դէպի ծնողները: Մտտ դէպքերում նրանք արհամարում են ծնողների, բարեկամների բարի խորհուրդը, լոկ նրա համար, որ նրանք դէմ են իրանց քմահաճութիւններին: Նրանք մոռանում են այն զոհարելութիւնները, որ արել է նրանց մայրը իրանց փոքր հասակում, և չեն ուզում զոհել իրանց ցանկութիւնները մօր հանգրստութեան համար:

Մտտ անգամ մարդ զարմանում է, թէ ի՞նչպէս նորահաս օրիորդները քիչ նշանակութիւն են տալիս հասարակաց կարծիքին: Նրանք շատ անհեռատես են ծանօթներ ու բարեկամներ ընտրելու մէջ: Ծանօթանում են այնպիսի մարդկանց հետ, որոնց բարոյական անձ լինելը կասկածելի է: Նրանք փողոցում այնպէս են պահում իրանց, որ ամբօրի ուշադրութիւնն են գրաւում: Զարմանալի չէ, որ այս պայմաններում անգործ երիտասարդները նրանց նայեն լկտի կերպով և նրանց ներկայութեանը թոյլ տան անտեղի վարմունքներ:

Այսպիսի վարմունքը բնականաբար կոտրում է նորահաս օրիորդի բարի անունը և մինչև իսկ ապականում է նրա բարոյականութիւնը:

Փամանակ է վերջապէս, որ համոզուին նորահաս օրիորդները, թէ կնոջ լաւագոյն զարգը համեստութիւնն է, իսկ ամբօրի ուշադրութիւնը գրաւելու իւրաքանչիւր փորձ, ապացոյց է անմիտ պարծենկոտութեան, թեթևամտութեան և վատ դաստիարակութեան: Նրանք պէտք է իրանց անունը պահեն ինչպէս անզին գանձ: Կան շատ օրինակներ, երբ նորահաս օրիորդներն իրանց բարի անունն

աւերել են, խորտակելով ողջ կեանքը, միայն նրա համար որ եղել են թեթեամբիտ:

Իսկ ինչ վերաբերում է նորահաս օրիորդների գուարճութիւններին, այստեղ մէջ կըբերենք Րէսկինի խօսքերը, որն իւր բոլոր գրուածքներում այն միտքն է շեշտում, թէ օրիորդները պէտք է գբօսնեն բաց օգուամ, ընտրելով գուարճութեան միջոց մարմնամարգութիւնը, որով գարգանում է նրանց մկանունքը և ամրանում է ոյժերը: Սակայն հեղինակը վերոյիշեալին աւելացնում է: — Զուարճութիւններն, ինչպէս էլ լինին, նրանցով չի կարելի յաիշտակուել, բաւականութիւն կարելի է գտնել նաև շրջապատողների մէջ: Երբ որ մեր սիրտն ազատ է աւելորդ հոգսերից, իսկ ձեռքերը զբաղուած են մի որևէ օգտակար գործով, այն ժամանակ ամեն մի չնչին բան ընդունակ է մեզ ուրախացնելու և կըծառայէ մեր բաւականութեանը, օրինակ, կարելի է սրախօսութիւն անել, կատակներ սարքել և այլն:

Եթէ ձեր խելքն զբաղուած է միայն գուարճութիւնների յետեից ընկնելով՝ այն ժամանակ դուք կըվարժուիք մեղկ կեանքի և վերջը ամեն բանի վրայ կընայէք անտարբեր աչքով: Անձնատուր եղէք ուրախութեան, երբ կայ զբա համար առիթ, առանց բաւա-

կանութիւնը կեանքի նպատակ դարձնելու, գնահատեցէք ուրիշների ուրախ բնաւորութիւնը և պահեցէք նրանց հոգու ուրախ տրամադրութիւնը:

Իմ թղթակիցներից շատերը ցոյց են տալիս օրիորդների ցաւալի թոյլ բնաւորութիւնը: «Նրանք այնքան քնքոյշ են ու թեթեամբիտ, որ անպէտք են կեանքի մէջ: Եթէ նրանց որևէ վիշտ է հանդիպում և կամ ստիպուած են լինում հեռանալ հայրենի տնից, այդպիսի դէպքերում նրանք իսկապէս դառնում են կարեկցութեան արժանի: Նրանք, վճռապէս կարելի է ասել, որ անընդունակ են իրանց կերակրելու»: Միւս կողմից շատ օրիորդներ չափազանց անձնավստահ լինելով, հրաժարում են բարեկամների օգնութիւնից, որոնք փորձում են նրանց պահել կեանքի անյաջող պայմաններում սայթակուելուց: Անկախ լինելու ձգտումը պատճառ է դառնում նրանց միակ ցանկալի կանացի հրապոյրի կորչելուն, հաւատ բնծայելով իրանց սիրած մարդկանց համակրութեանն ու օգնութեանը:

Օրիորդների վերոյիշեալ թերութիւնները թուելով, ես, իհարկէ, դիտաւորութիւն չունիմ բոլոր թղթակիցներին թուած պակասութիւնները դուրս բերելու, բայց այս համառօտ տեսութեան մէջ յիշուածներն էլ բաւական են նրանց համար, որոնք ցանկանում

են ազատուել իրանց թերուժիւններից: Թուու-
ցիկ կերպով ցոյց տալով օրիորդները պակա-
սուժիւնները, անկեղծ սրտով բարեք եմ ցան-
կանում ընթերցողուհիներէս, կամենալով օգ-
նուժեան ձեռք մեկնել նրանց:

Իմ թուած թերուժիւններից շատերը
կարող են աննշան համարուել, բայց անտա-
րակոյս է, որ ամենափոքր բիծը փչացնում
է պատկերի գեղեցկութիւնը և նուազեցնում
է սպիտակ շորի փայլը, ինչու որ, կատարե-
լուժիւն ստացուում է չնչին մեծութիւնների
ընդհանուր միաւորութիւնից, չնչին թերու-
ժիւններն երբեմն այնքան են աճում, որ աւե-
րում են կեանքի բոլոր բախտաւորութիւնը:

Մեզանից իւրաքանչիւրը պարտաւոր է
ձգտել բարոյական կատարելութեան, իսկ կա-
տարելութեան հասնելու համար, ինչպէս
արդէն վերեն ասացի, ամենից առաջ անհրա-
ժեշտ է հասկանալ, թէ ինչո՞ւ մէջ է կայա-
նում մեր թերին, ի՞նչ պակասներ են տես-
նում մեր մէջ կողմնակի մարդիկ և իսկապէս
ի՞նչումն է կայանում ծածկուած սխալ հա-
շիւը, որի մասին միայն մեր խիղճը կարող է
մեզ շնչալ: Հասկանալով մեր սխալները,
բնականաբար կ'աշխատենք նրանց արմատա-
խիլ անել: Հին նկարիչ Սպելլէսը նշանաբան
էր ընտրել իւր համար հետեւեալը. — «Իւրա-

քանչիւր օր պէտք է առաջ տանեմ գործս
թէկուզ վրձնի մի շարժման չափով»: Նորահաս
օրիորդներին օգտակար կը լինէր այդ նշանա-
բանն յարմարեցնելու իրանց կեանքին, այնպէս
որ չ'անցնէին նրանք և ո՛չ մի օր առանց ուղղե-
լու իրանց բնաւորութեան որևէ թերին, էլ
չեմ ասում, թէ որքան նպատակալարմար է
այդ նշանաբանը ժամանակ անցնելու համար:

— Իւրաքանչիւր նորահաս օրիորդ, — ասում
է Րէսկինը. — պիտի աշխատի, որ օրուայ մեծ
մասը նուիրէ որևէ օգտաւէտ գործի, որ ա-
մեն երեկոյ աշխատող գիւղացու նման կարո-
ղանայ պարծենալ, թէ կերած հացը կորած չէ:

Օրիորդների մէջ նկատուող պակասու-
թիւնները թուելուց յետոյ, այժմ անցնենք
նրանց գնահատելի կողմերին, որոնք կարևոր
են նրանց համար: Երիտասարդներին տուածս
երկրորդ հարցը հետեւեալն էր. — Ի՞նչպիսի
խելքի ու բնաւորութեան տէր պէտք է լինին
նորահաս օրիորդները, որ մօտենան կնոջ
իդէալին:

Այդ հարցի պատասխանների մէջ ամե-
նից շատ շեշտուում է հեզութեան մասին:

— Կինը բարի և ներողամիտ պիտի լինի
դէպի ամենքը, պահելով դրա հետ միասին
իւր արժանաւորութեան զգացումը: Նրա հե-
զութիւնը պէտք է նկատուի վարքի ու խօսքի

մէջ: Նապիտի սիրէ իւր տունը և կառավարէ նրան բնաւորութեան որոշ տոկունութեամբ և համաձայն իւր մշակած կանոններին: Սիրելով իւր ընտանեկան յարկը, գաղտփարական կինը կ'զգայ թագուհի միայն իւր տան մէջ և որպէս իսկական թագուհի, միայն հազուադէպ բացառութեամբ կը թողնէ իւր թագուհութիւնը, որովհետեւ նրա ուշքն ու միտքը կենդրոնացած է այդ թագաւորութեան բարօրութեան վրայ և միայն այն ժամանակ հանգիստ կը լինի, երբ կը դառնայ իւր պաշտօնատեղին»: Զ. Ռէսկին.

—Պաղափարական կինը,— գրում է իմ երիտասարդ թղթակիցներից մէկը,— պիտի աշխատի միշտ զուարթ լինել և սովորի պահպանել հոգու միատեսակ տրամադրութիւն, ինչպէս և կեանքի ծանր պայմաններում համոզմունքների հաստատութիւն: Պ գէպ է կրկին մէջ բերել Ռէսկինի խորհուրդները, ուղղուած նորահաս օրիորդներին: Միշտ պահպանեցէ՛ք բնաւորութեան ամրութիւն և հոգու զուարթ տրամադրութիւն. կեանքի անյաջող զէպքերին վերաբերուեցէ՛ք Աստուծոց ուղարկուած փորձութեան պէս, ուստի և դիմացէ՛ք նրանց անտրտունջ ու զուարթ, ինչպէս մի զինուոր, որին յանձնուած է թշնամու յարձակման ժամանակ կարևոր մի

դիրք և նա հպարտ է այդ դիրքը պահպանելով:—Յիշեցէ՛ք որ կեանքի մէջ արտաքին հանգամանքները երկրորդական բաներ են, կարևորն այն է, որ այդ հանգամանքները չըփչացնեն ձեր հոգու խաղաղ տրամադրութիւնը և չ'աղոտացնեն ձեր պարզ աշխարհայնօրութիւնը:

Նորահաս օրիորդի գլխաւոր գեղեցկութիւնը կազմում են—մտերմութիւնը, գէպ՝ ուրիշները ներողամտութիւնը, անկեղծութիւնը և սեպհական խղճի առաջ իւր պատասխանատուութեան գիտակցութիւնը. գեղեցկութիւնը էական նշանակութիւն չունի, որովհետեւ արտաքինի և ձևերի տպաւորութիւնները նսեմանում են տնական կեանքի առօրեայ հոգսերի մէջ, այն ինչ բարութիւնը, սիրալիր և ուրախ բնաւորութիւնը ներկայացնում են այն կապը, որոնցով կապուած են ընտանիքներն ու հասարակութիւնները: (Սմայլս)

«Նորահաս օրիորդները,— գրում են ինձ,— պիտի տէր լինին հաստատուն բնաւորութեան, որի հետ միասին ունենան զգայուն սիրտ ու կարեկցութիւն, միայն թէ սրտի բարութիւնը բնաւորութեան թուլութեան նշան չըլինի»: «Նորահաս օրիորդը պիտի լցուած լինի հոգու կատարելութիւններով, որոնք բաղկացած

պիտի լինին հեզուժեան, համբերութեան և համեստութեան տարրերից: Նա պիտի լինի կորովի, անյողողոզ բնաւորութեան տէր և ներող ու կարեկցող սիրտ ունենայ: Նա մտքերով ու գործով պիտի հետևող լինի Քրիստոսին ու Նրա վարդապետութեանը»: Նոյն թըղթակիցն իւր նամակի վերջը աւելացնում է. «Իմ մայրն ունէր վերոյիշեալ բոլոր յատկութիւնները և զրանով ապացուցեց ինձ, որ կարելի է աշխարհիս վրայ գլուխ բերել այդ գաղափարը:

Առանց հեզուժեան անկարելի է կեանքի մէջ գաղափարի հասնել: Խստասրտութիւնը նշանաւոր պակասութիւն է համարուում տղամարդկանց մէջ, իսկ կանանց խստասրտութիւնը կորցնում է նրանց բնութեան բոլոր հրապոյրը: «Ամենից կարևորն այն է, որ խըստասիրտ չըլինիք, գուցէ երբ դեռ օրիորդ էք, դուք կ'երևակայէք, թէ առիթ չէք ունենալ խիստ երևալու, բայց ես խօսում եմ նախապէս մտադրուած խստութեան մասին: Իմ ցանկութիւնս է ցոյց տալ, որ դուք համբերող ու ներողամիտ լինիք դէպի բոլոր ձեր շրջապատողները, որոնց հետ ամեն օր յարաբերութիւն ունիք, եթէ ոչ անշուշտ անարդար ու խիստ կըլինիք ամենքի վերաբերութեամբ: (Ջ. Բէսկին)

Իմ հարցերի պատասխաններէց շատերի մէջ լիշուում է նորահաս օրիորդների բարոյական մաքրութեան մասին, որպէս նրանց ամենանշանաւոր յատկութիւն: Բարոյական մաքրութիւնը բղիւում է գաղափարական օրիորդի սրտի խորքից և ծառայում է նրան որպէս առաջնորդող աստղ: Այսպիսիների համար Փրկիչն ասում է. «Երանի՛ նրանց, որոնք սրտով սուրբ են, որովհետև նրանք Աստուծուն կըտեսնեն:

Մարդկանց հետ ունեցած բոլոր յարաբերութիւնների մէջ շիտակ ու ազնիւ լինելը գաղափարական կնոջ ամենանշանաւոր յատկութիւններից մէկն է: «Գաղափարական օրիորդը պիտի լինի այնքան տոկուն, որ կարողանայ միացնել կեանքին իւր մշակած կանոնները, որոնք կապ ունին բարոյական բոլոր խնդիրների հետ: Երտակութիւն ու ազնուութիւն պիտի գործ դնել ոչ միայն կեանքի վսեմ պարտաւորութիւններ կատարելիս, այլև իրան վիճակուած առ օրեայ գործերը հոգալիս»:

Իսկապէս անցան անդարձ կերպով այն ժամանակները, երբ քաղաքակիրթ երկրներում կանայք հասարակութեան մէջ ծառայում էին միայն զարդի տեղ, կտրուած լինելով հասարակական կեանքից: Մեր օրերում կինն արդէն զրաւել է կարևոր դիրք հաստ-

րահուլթեան մէջ, այժմ նրան են յանձնուում
այնպիսի գործեր, որոնք պահանջում են ծանր
պատասխանատուութիւն: Այլևս կնոջ կեանքի
մէջ ամուսնութիւնը չէ միակ նպատակը:

Շատ կարելի է հազարաւոր օրիորդներ
երբէք էլ չեն ամուսնանում, բայց և այն-
պէս չպէտք է կարծել, որ նրանց կեանքն
անհետ կըկորչի, քանի որ նշանի մատանի
չեն անցրել մատերին: Կանայք էլ տղամարդ-
կանց նման ունին անմահ հոգի, նրանք հա-
կառակ մորմոնների ուսման,*) կարող են յա-
ւիտենական կեանքը ժառանգել, մնալով կոչս
իրանց բոլոր կեանքում: Անշուշտ իւրաքան-
չիւր կնոջ համար ամենալաւ վիճակը բախ-
տաւոր ամուսնութիւնն է, անկարելի է յար-
գանքով չըվերաբերուել դէպի ամուսնութիւ-
նը, որպէս հասարակութեան գովելի սահմա-
նադրութիւն, բայց շատ սխալ են այն օրի-
որդները, որոնք համարում են ամուսնու-
թիւնը բախտաւորութեան միակ պայման:
Մենք տեսնում ենք ինչպիսի տիւրը վախճան
են ունենում այն ամուսնութիւնները, որոնք
անարժան ձգտումներով փեսայ են որսում:

*) Մորմոնների աղանդը տարածուեց 1827-թուին, Հիւ-
սիսային Ամերիկայում: Նրանք հաւատում են բազմաստուածու-
թեան: Նրանց հաւատալիքով, անմեղ հոգիները մեռնելուց յի-
տոյ կըբարձրանան աստուածութեան ղանադան աստիճանների
վրայ: Թարգ.

Իւրաքանչիւր նորահաս օրիորդ իւր
կեանքի գլխաւոր նպատակ պիտի համարէ
նախ և առաջ հաւատարիմ լինել դէպ՝ իւր
պարտքը, ապագայում դառնալ ազնիւ, անա-
բատ և գաղափարին ձգտող բարոյական կին:
Նա պիտի խիստ կերպով որոշէ իւր պարտա-
ւորութիւնը և պատասխանատուութիւնը Աս-
տուծու և մարդկանց առաջ և կատարէ այն՝
ինչ որ իրանից պահանջում է խիղճը: Ուրեմն
նրա նպատակը պիտի լինի իւր մէջ միացնել
սրտի ու խելքի լաւ յատկութիւններ և միշտ
պիտի պարտաւոր լինի Աստուծուն ծառայե-
լու այն ասպարէզում, որի մէջ Նրան հաճելի
է եղել նշանակելու: Յորդորում եմ օրիորդ-
ներին նախ և առաջ կատարեն իրանց պար-
տաւորութիւններն անթերի և ազնուութեամբ
հասկանան իրանց դերի պատասխանատու-
թիւնը և պատրաստ լինին տանելու իրանց
խաչը:

Յորդորում եմ լինել գաղափարական
կանայք, արժանի կնոջ վսեմ կոչումը կրելու,
խօսքի ամենալայն մտքով:

Իմ թղթակիցներէց մէկը խօսում է այն
բարերար ազդեցութեան վրայ, որ ունին
քոյրերը դէպ իրանց փոքր եղբայրները, դառ-
նալով իսկական պահապան հրեշտակներ նրանց
կեանքի փորձանքների ժամանակ: Կասկած

չկայ, որ երիտասարդը այդ բանը փորձել է, իւր վրայ, կրելով բոլոր բարերար ազդեցութիւնը: Կարելի էր ամբողջ հատորներ գրել կանանց այդ օրինակ նուիրական կոչման մասին: Դեռ ևս ս. Գրքից գիտենք, որ Մովսէսի մեծ քոյր Մարիամը պահում էր նրա օրօրոցը գետի ափին, երբ նրա մայրը Փարաւոնի հալածանքից ստիպուած՝ մանուկին փրկելու յուսով, գետի ալիքներին էր հաւատացել նրա օրօրոցը: Մարիամի հոգատարութեամբ փրկուեց այս մեծ մարդու կեանքը:

Այս միակ դէպքը չէ, որ քոյրը անձնուէր է եղել դէպ՝ իւր փոքր եղբայրը:

Շատ տղամարդիկ, որոնք իրանց աչքի ընկնող ընդունակութիւններով հուշակ են ստացել, իրանց փառքը պարտական են որևէ կնոջ սիրոյ, որը յաճախ անյայտութեան ստուերում պառաւել, կորցրել է իւր բոլոր գրաւչութիւնը և ապրելով միայնակ, մոռացուել է ամենից: Այդպիսի հանճարեղ մարդու համար կինը եղել է նրա երիտասարդ հասակում պահապան հրեշտակը, որին ամբողջապէս տուել է այն բոլորը, ինչ որ ունեցել է իւր մէջ, զոհելով իւր կեանքը, շատ կարելի է և իւր անձնական բախտը նրա բախտաւորութեան համար:

«Կարելի է զրականապէս ապացուցանել, — ասում է Ռէսկինը, — որ իւրաքանչիւր տղամարդ, որ անմահացրել է իւր անունը, նա իւր փառքը պարտական է որևէ կնոջ սիրոյ, որ նրան պահպանել է իւր արթուն հսկողութեամբ, և նրա կեանքի նեղ հանգամանքներում ուղղել է նրա քայլերն իւր խելքով: Նոյն փիլիսոփան բերում է օրինակներ անձնուէր կանանց արած ծառայութիւններին, վերցնելով երևելի գրողների շարադրութիւններից: — Սկսենք Շէքսպիրից, — ասում է նա: — Նրա դրամաներում չկան բոլորովին հերոսներ, նրանց մէջ պատահում ենք միայն հերոսուհիներին: Կարելի է մինչև անգամ ասել, որ նա չունի և ոչ մի դրամա, որի մէջ նկարագրուած չըլինէր գաղափարական կինը, որ առանց տատանուելու ձգտում է դէպ իւր նպատակակէտը և որը համոզուած է հասնելու այդ ցանկալի նպատակին. սրան ապացոյց են Կորդէլիան, Բէզզէմոնան, Իմագինը, Կատերինա թագուհին, Պերդիտը, Ռոզալինդիան և Ելենան, այս բոլորն էլ գաղափարական կնոջ մարմնացումներ են: Ուշադրութեան արժանին

այս է, որ իւրաքանչիւր դրամայի աղէտը առաջ է գալիս տղամարդու անմիտ վարմունքից կամ անխոհեմութիւնից, իսկ փրկութիւնը, բւր որ այդ կարելի է, եղել է կանանց ձեռքով:

չնորհիւ նրանց առաքինութեան և թափանցիկ մտքի: Այսպէս, օրինակ, «Լիր-Արքայի» մէջ աղէտն առաջանում է հէնց Լիր-Արքայի սնապանձ ու անհետևողական վարմունքից, այն ինչ այդ աղէտը երբէք տեղի չէր ունենալ, եթէ նա լսէր իւր առաքինի Կորգելիա դստեր խօսքը և չհրաժարուէր նրանից, արտաք լով նրան իւր տանից:

«Օտելլօ»ի մէջ մենք տեսնում ենք մինչև անգամ երկրորդական դերակատար կանանց բնաւորութիւնները շատ աւելի բարձր են տղամարդկանց մտաւոր և բարոյական կողմերից: Յիմար և խանդոտ Օտելլոն անխոհեմութեամբ սպանում է անմեղ և չափազանց սիրող կնոջը նոյնպէս և իրան: «Րոմէօ» ի մէջ մենք տեսնում ենք, թէ ինչպէս Ջուլիէտտայի համարձակ և նախամտածած ծրագիրը ամենացաւալի կերպով քանդուում է իւր ամուսնու անգուսպ անհամբերութեան պատճառով, «Կօրիօլանօ» ի մէջ օրդին սպանուում է միայն այն պատճառով, որ չի լսում մօր խելացի խորհուրդները: Այսպէս էլ, առանց բա-

ցառութեան, Շէքսպիրի բոլոր դրամասերուս կանայք դուրս են բերուել օրպէս խելօք ու հաւատարիմ խորհրդատուներ տղամարդկանց համար, որոնք ցոյց են տալիս ազնուութեան, պարտքի հաւատարմութեան և արիութեան

վսեմ օրինակներ: Շէքսպիրեան հերոսուհիների մէջ՝ ի միջի այլոց, կարելի է գտնել միակ թոյլ բնաւորութեան տէր կին Օֆելիլային: Նա բարոյական ոյժ չունի պահպանելու շամլէտին նրա կեանքի ճգնաժամի մէջ և նրանից հէնց այն ժամանակն է հեռանում, երբ շամլէտն աւելի կարօտ էր նրա օգնութեանն ու խորհրդների, իսկ այդպիսով կողմնակի կերպով օգնում է դրամայի ցաւալի լուծմանը: Ծիշտ է, Շէքսպիրը գլխաւոր դործող անձնաւորութիւնների մէջ ունի և երեք խստասիրտ կանայք, Լեդի Մակբէտը, Գոններիլն ու Րէզանը, բայց նրանք դուրս են բերուած ընդհանուր օրէնքի մէջ օրպէս հրէշաւոր բացառութիւններ:—

Այժմ անցնենք Գանտէի անմահ վիպասանութեանը. նրա մէջ աստուածացրած կինը պարզ և տրուած բանաստեղծի երախտագէտ սիրտը խնամելու համար. նա լոկ կարեկից է բանաստեղծին և ո՛չ թէ սիրող, բայց և այնպէս ազատում է նրան կորստից, դժոխքի սարսափներից. նա երկնքից ցած է իջնում նրա մօտ և տանում է նրա հօգին դէպի Ղրախտ, բացատրելով բանաստեղծի մտքի համար անմատչելի աստուածային և երկրաւոր ճշմարտութիւնները. ուղղելով նրա թոյլ քայլերը, անցնում է նրան երկնային լուսա-

տունների խմբի միջից: Յոյն բանաստեղծներից Սոփոկլէսի և Հոմերոսի հերոսուհիների մէջ տեսնում ենք գաղափարական կանանց տիպեր, Անտրոմաքէին, Հեկտորի կնոջը, որ հրուշակուած էր իւր անսահման ամուսնական և մայրական սիրով, խելօք Կասանդրաին, պարզասիրտ և կենսուրախ իշխանուհի Նաւզիկաին, անտեսուհի Պենելոպաին, որ անվրդով աչքերը դէպի ծովն ուղղած՝ սպասում էր իւր ամուսնուհետուր թափառումներից վերադարձին. Անտիգոնին, որ անհուն համբերութեամբ և անվեհեր սրտով, բախտի ալեկոծութեան մէջ հանդիսանում է աղջկայ և քրոջ կատարելատիպը. Իֆիգենիաին, որ լուռ հնազանդուած էր իւր դառը վիճակին, վերջապէս Ալցեստրին, որ հոգիների յարութեան մարմնացումն է ներկայացնում, ցանկանալով ամուսնուն փրկել, նորից դէպի կեանքն է վերադառնում, հանգիստ սրտով վճռելով կրելու մահուան սարսափները:

Իւրաքանչիւր հասարակութեան մէջ կայ կանանց առանձին դասակարգ, որին հասարակութիւնը շատ անգամ արհամարանքով անուանում է «պառաւ-կոյս»: Բայց աշխարհը այդ արհամարանքով կարծես չի ուզում հասկանալ, թէ այդ կանանց մէջ որքան չըճանաչուած հերոսուհիներ կարելի է գտնել, քանի բարե-

գործներ, որքան ընտանիքի յոյսեր, որքան անձնուէր ծառայողներ կան մարդկութեան համար, որոնք աշխատում են Քրիստոսի անունով: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ հազարաւոր կանայք կոյս են մնում ծնողների, ընտանիքի անդամների համար, որոնք նրանց օգնութեանն են կարօտ: Շատ նորահաս օրիորդներ, յաղթելով իրանց ներքին կրքերին, ծառայում են Քրիստոսին և մարդկութեանը: Այսպէս, օրինակ, յայտնի միսս Նայտինգէլը հրաժարուեց սեպհական բախտաւորութիւնից, զոհելով իրան սպասուող բախտաւոր ամուսնութիւնը և պատերազմի ժամանակ հիւանդանոցներում ծառայեց որպէս գթութեան քոյր:

Նա խկապէս պահապան հրեշտակ դարձաւ վիրաւոր և զրկանքներից ուժասպառեղած զինուորներին, որոնց խնամում էր անօրինակ անձնազոհութեամբ:

Նա դժբախտութեան ժամանակ մարդկութեանը եռանդով ծառայելը դերադաս համարեց ընտանեկան յարկի խաղաղ բախտաւորութիւնից:

Անձնազոհութեան մի այլ օրինակ կարելի է ցոյց աւել, որ տեսնուեց Անգլիայի համաճարակի ժամանակ: Դա քոյր Դորան էր, որ անուանուեց «աշխարհային վշտի հարս».

Իւրաքանչիւր հասարակական շրջանում կարելի է հաշուել հարիւրաւոր կանաչք, որոնք չեն ամուսնացել տանից չբնականալու համար, որպէսզի օգնեն ծնողներին և ընտանիքներին: Այդ կոյս կանաչք արժանի են ամենայն յարգանքի, նրանց կարելի է հերոսուհիներ և ճշմարիտ գթութեան քօյրեր անուանել հասարակական այն շրջանի համար, որի մէջ նրանք աշխատում են:

Փոխանակ արհամարանքով վերաբերուելու, ինչպէս երբեմն դժբախտաբար պատահում է, պէտք է ամեն կերպ յարգանք նուիրել, պէտք է համբուրել այն աշխատաւոր ձեռքերը, որոնց չէ սեղմել կուրծքին և ոչ մի սիրահար երկրպագու, որոնք կոշտացել են ուժից վեր աշխատանքի մէջ յօգուտ տառապեալների:

Գաղափարի ձգտող իւրաքանչիւր կին իւր կեանքում պիտի հետևի Յիսուսի օրինակին. միայն նա կարող է կնոջ համար լինել բարոյական կատարելութեան օրինակ:

Ս. Աւետարանը պատմում է թէ ինչպէս Մարիամը նստել էր Յիսուսի ոտների մօտ և լսում էր նրա խօսքերը, իսկ Մարթան հոգում էր լաւ հիւրասիրելու մտով, մինչև որ նա մօտենալով ասաց. — Տէր, չես տեսնում որ քօյրս ինձ մենակ է թողել, ասած նրան, որ

գալ ինձ օգնէ. Յիսուս պատասխանեց. — Մարթա, դու ընկել ես դատարկ բաների յետևից, մինչդեռ մեզ համար քիչ բան է հարկաւոր: Մարիամն ընտրել է լաւ մասը, որը նրանից չեն խլելու:

Այս զրոյցիս սկզբում ես ընտրեցի Սաղմոսերգուի խօսքերը — Թագաւորի ազջկայ բոլոր փառքը ներսն է, նրա շորերը ոսկով են զարդարուած: Այս խօսքերը վերաբերում են նորահաս օրիորդների ինչպէս հոգեկան, այնպէս էլ մարմնական ձգտումներին. «բոլոր փառքը ներսից», այսինքն նրանց սրտի խորհուրդները պիտի լինին մաքուր, գեղեցիկ և Գրիստոսին նմանուելու ցանկութեամբ լիքը, «շորերը ոսկով զարդարուած», այսինքն ոսկեթելերով խառն գործուած, որ նշանակում է օրիորդների վարքը պիտի աչքի ընկնի անբիծ բարոյականութեամբ, բոլոր լաւ գործերը ոսկու պէս պիտի փայլեն, նրանց կեանքը պիտի անցնի գաղափարին ձգտելու կատարելութիւնով, որի օրինակն է մեր Երկնաւոր վարդապետը:

Ձեր բոլոր խորհուրդները պիտի լինին մաքուր և ճշմարիտ, այն ժամանակ ձեր կեանքն էլ կըլինի նոյնպէս մաքուր. անկարելի է անբիծ կեանք վարել, երբ սիրտը լիքն է անարժան խորհուրդներով. ձեր սրտի վատ խորհուրդներն ստուեր կըձգեն ձեր ամբողջ կեանքը:

քի վրայ և կրխլեն ձեզանից բոլոր փայլը, ինչպէս, օրինակ, եսասէր մարդուց երբէք դուրս չի գալ կեանքի մէջ անշահասէր նպատակներով մարդ, այդպէս էլ անհնար է, որ մեր կեանքը լցուած լինի պայծառ ուրախութիւններով, եթէ սրտերս լիքն են թոյներով ու անմխիթար մտորմունքներով:

«Կան աշխարհիս երեսին մարդիկ, — ասում է Փաբերը, — որոնք ընդունակ են ուրախութեան մաքուր աղբիւր գտնել իրանց շրջապատող ամեն բանի մէջ, այդպիսի մարդիկ ուրախութիւն և բախտ են տարածում շուրջը, որտեղ նրանք յայտնուում են, կարծես նրանցից դուրս են գալիս լոյսի ճառագայթները: Նրանց ազդեցութիւնը շրջապատողների վրայ չի ցլանալ, նրանք մըտցնում են բոլոր շրջապատողների սրտերի մէջ ուրախութիւն և վիճակի գոհութիւն: Ինքն Աստուած կարծես թէ ոգևորել է նրանց իւր լուսով, նրանք առանց այդ բանը հասկանալու լուսատու ջահ են մթութեան մէջ: Այդպիսի մարդիկ իրանց բնութեան ընդունակութիւնների հմայքի շնորհիւ, մեծ ծառայութիւններ են անում բոլոր մարդկութեանը:

Մի քանի ընտիր բնաւորութիւնների հմայքի բոլոր գաղտնիքը նրանումն է կայանում, որ այդ մարդիկ հաշտ են ապրում իրանց խղճի

հետ, որովհետեւ մեր բոլոր կեանքը անմիջական կախումն ունի մեր հոգեկան աշխարհից: Միւսնոյն ժամանակ պէտք է նկատել, որ մարդկանց հոգեկան յատկութիւններն այն աստիճան ցլանում են նրանց արտաքինի վրայ, որ շատ անգամ տգեղ դէմքերը գեղեցիկ են երևում, եթէ մարդն ունի հոգու բարձր յատկութիւններ:

Միայն մէկ ճանապարհով կարելի է հասնել բարոյական կատարելութեան: Բնականից մենք բոլորս էլ հեռու ենք կատարեալ լինելուց, մենք լցուած ենք թերութիւններով և ամենամանր կրքերով: Բայց մեր Փրկիչը, եթէ դիմում ենք նրա օգնութեանը, կարող է մաքրել մեր հոգին, այնպէս որ նա այնուհետեւ կը դառնայ ձիւնից աւելի սպիտակ: Նա կարող է փրկել մեզ մեղքերից, բարձրացնել մեր հոգին և ուղղել մեր խորհուրդները դէպի ազնիւ նպատակներ:

«Նրա շորերը ոսկուց են կարած»։ Թագաւորի աղջիկը հետեւաբար, ոչ միայն տէր է զսեմ հոգու, այլև նրա բոլոր կեանքը համապատասխան է նրա ներքին յատկութիւններին. նրա բնաւորութիւնն այնքան գեղեցիկ է, որքան գեղեցիկ է և նրա հոգին, նա բարի է, հեղ, զիջող, նա բարիք է անում. Նրա սիրտը լցուած է լուսով, իւր ճառագայթ-

ներն է տարածում շուրջը և լուսաւորում է բոլոր իւր էութիւնը, կեանքի բոլոր ճանապարհը: Թագաւորի աղջկայ գէմքի վրայ փայլում է նրա հոգու խաղաղութիւնը և նրա բոլոր էութիւնը կլանուած է կենսութեան յատկութիւնով:

Իւրաքանչիւր նորահաս աղջիկ պէտք է լիշէ, որ ինքը «Թագաւորի աղջիկ է» և պատուով կրէ իւր արքայական հանդերձը, նրա մշտական հոգսը պիտի լինի՝ կատարել Երկնաւոր Հօր կամքը. նրա առաւօտեան աղօթքը պիտի լինի—Ուղղիր, Տէր, ոտքերիս քայլերը, սովորեցրո՛ւ ինձ կամքդ կատարել. հրամայիր ինձ, ես պատրաստ եմ Քո ցոյց տուած գործը կատարել, պատրաստ եմ օգնութեան հասնել նրանց, որոնք կարօտ են օգնութեան. Քո անուան նուիրում եմ անձս Քեզ և մարդկանց ծառայելու համար:

Մենք ոչ մի կարիք չունինք ծանր անձնագոհութիւն անելու նրա համար, որպէսզի մեր կեանքը զարդարենք բարեպաշտական գործերով, բաւական է միայն իւրաքանչիւր օր լիշեալ աղօթքով հաստատ որոշմամբ գործի ձեռնարկենք, այն ժամանակ արդէն մեր կեանքը չի անցնիլ անհետ և մենք օրինակ կրդառնանք մեզնով ուրիշներին, որոնց հետ յարաբերութիւն կ'ունենանք:

Բայց նոխ և առաջ մենք պէտք է աշխատենք մեր ընտանիքի անդամների սրտերի և հոգու մէջ խրախօյս և մխիթարութիւն մտցնենք, և զգուենք նրանց մեր սիրով որոնք կարօտ են մեր հոգատարութեանը:

Խորհուրդ եմ տալիս նորահաս օրիորդներին ամեն միջոց գործ զնել, որպէս զի իրանց սիրելի մերձաւոր մարդիկ սկսեն իւրաքանչիւրն իւր օրը նրանց սիրով տաքացած և նրանց օրինակով իրախուսուած, այնուհետև թող նրանք սկսեն իրանց պարտականութիւնները կատարել տանից գուր, նոյն աշխոյժ, ուրախ տրամադրութիւնը մտցնելով այն բոլոր մարդկանց մէջ, որոնց հետ պիտի յարաբերութիւն ունենան:

Ս. Աւետարանից մենք գիտենք, որ նա, ով մի անգամ քսուեց Փրկչի հանդերձի ծալրին՝ իսկոյն փրկուեց իւր ցաւից: Պետրոս առաքեալի մասին պատմւում է, թէ մարդիկ իրանց հիւանդներին զնում էին փողոցներում, որտեղից նա պէտք է անցնէր, որպէս զի առաքեալի երեկոյեան ստուերն ընկնէր նրանց վրայ և առողջացնէր: Այդ օրինակը կարելի էր յարմարեցնել մեր կեանքին:

Մենք պիտի լցուած լինինք Տիրոջ Հոգով, որ իւրաքանչիւր գէպքում, մեր պաշտպանութեան, մեր բարոյական օգնութեանը կարօտ

մարդկանց հետ յարաբերութիւն ունենալիս, դիմաւորենք նրանց պատրաստակամութեամբ և բժշկենք նրանց հիւանդութիւնները, պահպանենք նրանց մէջ հոգու արիութիւնը, այնպէս որ մեր ներկայութիւնը բարերար ազդեցութիւն ունենայ այն բոլորի վրայ, որոնց հետ գործ կ'ունենանք:

Սեզանից իւրաքանչիւրին կեանքի մէջ պատահած կըլինին այնպիսի բարի մարդիկ, որոնք բարի և խոհեմ խորհրդներով աղղել են մեր հոգու խաղաղ տրամադրութեան վրայ, ուղղելով մեր միտքը դէպի արդիւնաւոր գործունէութիւն:

Սյդ մարդկանց խրախուսիչ ազդեցութիւնը մեզ վրայ փորձելուց յետոյ, մենք էլ մեր հերթում պարտական ենք նոյնն անել, որպէս զի մեր կեանքն էլ դառնայ աղբււր բարութեան, հոգեկան խաղաղութեան, և գոհութեան, որպէս զի մարդիկ մեզանից հեռանալիս՝ զգան իրանց հանգստացած, խրախուսուած մեր ազդեցութեամբ, մեր կեանքի վրայ ունեցած պարտաւորութիւնների զիտակցութեամբ և լուսաւոր հայեացքների շնորհիւ:


Մի քանի նորահաս օրիորդներ այսպիսի գաղափարը կարող են համարել անհասանելի. նրանք կ'ասեն. — Ես անհնար եմ համարում յարմարեցնելու իմ կեանքը այսպիսի վսեմ


նպատակների և չեմ կարող գաղափարական կին լինել, կարող եմ լինել միայն բարի կին, ամենևին ոյժ չունեմ հասնելու վերև ցոյց տուած կատարելութեան:

Սյո՛, դուք իրաւունք ունիք: Դուք չէք կարող գաղափարին հասնել, եթէ յոյսերդ կը դնէք ձեր սեպհական ոյժերի վրայ: Եթէ որ յոյս չունիք բարձրից օգնութեան և մտածում էք ձեր ոյժերով հասնել կատարելութեան, այն ժամանակ տեսնելով ձեր կամքի թուլութիւնը, դուք կը հասնիք վերջին ծայր լուսահատութեան: Բայց դուք պիտի լիշէք, որ ամեն պարտք, կեանքի ամեն պարտաւորութիւն կատարելու համար, մեզ խոստացուած է երկնքի օգնութիւնն ու օրհնութիւնը: Ուստի դուք կարող էք կեանքի մէջ մտնել վստահութեամբ, լուսալով աստուածային օգնութեանը, համոզուած լինելով, որ եթէ ձեր կեանքը կը նուիրէք Քրիստոսի ծառայութեանը, այն դէպքում լուսաստղը կ'առաջնորդէ ձեր ուղին:

Զրոյցիս վերջում թողնում եմ բարութեան գտող նորահաս օրիորդներին մտածելու Պօղոս առաքեալի խօսքերի վրայ. — «Եղբայրներ, պէտք է մտածէք նրա մասին, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ աղօթքով արդար է, մաքուր է, ու հաճելի, և ինչ որ արժանի է փառքի, առաքելութեան ու գովասանքի»:







ADM.
2-1548a

7

© ԳՐԱՆԵՐ Է 10 ԿՈՊ. ©

Գրմելի՝ Александрополь,
Доктору Н. Теръ-Саакянъ

~~7198~~
2005

ՀՀ Ազգային գրադարան



NL0212912

H 45.259
2-1248a